մեռաւ իր կինը, Մարիզ, յիսուն և մի տարեկան։ Այս երկու մահերը, մանաւանդ զաւկինը, կ'թուին խորապէս ազդած ըլլալ իր հոգւոյն վրայ. մանաւորապէս անոր կոկիծը և անոր յիշատակին մատնումն է կարծես որ բարեգործութեան և եկեղեցւոյ սէրը խորունկցուցին իր մէջ։

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ իրմէն կ'մնան ցարդ Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանաց, Եղիայի վերացման և Սրբուհի Կաստարիճեի նահատակութեան երեք պատկերներ, առաջին երկուքը իր ծնողաց յիշատակին նուիրուած, իր անուան և մականուան խորհուրդովը, և վերջինը՝ իր դստեր յիշատակին, և եպիսկոպոսական զգեստներ, թաղ մը և եմիփորոն։ Նորոգած է նաեւ Մարմինայի մեր մատուռը, և ջահով և քարէ մեծ աշտանակներով զարդարած։

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՑԵԱՆԻ ԿՏԱԿԸ

1906 Յունիս 7-ին (Հ. Տ.) ստորագրեց կտակ մը, որու գործադրիչ կարգած էր Պօղոս Փաշա Նուպար, և որով իր բոլոր գոյքն ու ստացուածքը, զոր ամբողջովին իր աշխատութեան վաստակը կ'յայտարարէ, կ'թողու իր Ղպտի ազգականներուն, որոնցմէ զատ չ'ունէր ուրիշ ազգականներ, և Ազգին։

Ազգին նուիրածներն են.

1.— Մահալլէ Քեպիրի Մերքեզ-ին մէջ, 277 ֆէտտան 21 քր. և 8 սէհմէ կալուած մը, որ պիտի մնայ անձեռնմխելի և անփոխանակելի, իր էզպէ-ներովը՝ տուներովը և կարասիներովը, յօգուտ Գահիրէի Գալուստեան Վարժարանին, անոր հասոյթներովը կազմելու համար Թոչակազումար մը (Bourse), որմէ պիտի նպաստուորուին, առանց դաւանանքի խտրութեան, Գահիրէի Գալուստեան Վարժարանի հայ որբ և աղքատիկ ուսանողներէն անոնք որ գիտութեանց և դպրութեանց պակաւորի վկայական են ստացած։

2.— Գահիրէի մէջ, Շուպրա փողոցի իր բնակարան մեծ տունը, պարտէզով և անոր հարաւակողմի յարակից տունը. Իսմայիլիէ թաղին մէջ, Մաղրապի և Մանսախի փողոցներուն